600.0461.05.10.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հոկտեմբերի 2011 թվականի №461Ա

ք. Երևան

«Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ժդ) ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» №169Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության հայտը և Երևան քաղաքում, Գեղարքունիքի, Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Շիրակի, Արագածոտնի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի մարզերում ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման համար տրամադրել 14784,5-14917,5ՄՀց, 15204,5-15337,5ՄՀց, 22302-22575ՄՀց, 23310-23583ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն՝ մինչև 2019 թվականի նոյեմբերի 4-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքում, Գեղարքունիքի, Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Շիրակի, Արագածոտնի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի մարզերում ռադիոռելեային կապի

   գծերի կազմակերպման համար 14784,5-14917,5ՄՀց, 15204,5-15337,5ՄՀց,

22302-22575ՄՀց, 23310-23583ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախա-կանությունների հատվածների օգտագործման թույլտվության պայմանները (հավելված):

3. «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսի վճարումը հավաստող անդորրագիրը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
5 հոկտեմբերի 2011 թ.
ժամը 16^{00}